

# ԿԱԹՆԱՏԱՄՆԵՐԻ և ՉՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՐՄԱՏՆԵՐՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՏԱՄՆԵՐԻ ՊՈՒԼՊԻՏՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Ամփոփում

### Նպատակ

Ուղեցույցի նպատակն է օգնել բժիշկներին ախտորոշելու և բուժելու կաթնատամների և չձևավորված արմատներով մշտական ատամների պուլպիտները:

### Մեթոդաբանություն

Այս ուղեցույցը մշակվել է Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի աշխատակիցների կողմից: Փաստաթղթի սկզբնաղբյուր է հանդիսացել Ամերիկյան մանկական ստոմատոլոգիայի ակադեմիայի (American Academy of Pediatric Dentistry, AAPD) 2006թ. լույս տեսած և 2014թ. թարմացված “Guideline on Pulp Therapy for Primary and Immature Permanent Teeth ” կլինիկական ուղեցույցը: Այս փաստաթղթի խորհուրդները հիմնված են գրականության համակարգային վերլուծությունների և փորձագետների կարծիքների վրա: Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի ընդլայնված նիստի ընթացքում (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է մանկական և մեծահասակների ստոմատոլոգների, մանկաբույժների և առողջապահության կազմակերպիչների համար:

### Արդյունքներ

Տվյալ ուղեցույցի խորհուրդները էականորեն օգնում են գործնական ստոմատոլոգին կակղանի ախտահարումների ժամանակ բուժման ճիշտ մեթոդի ընտրության վերաբերյալ կլինիկական որոշումներ կայացնելիս: Մասնավորապես, ներկայացվել են ապացուցողական հիմքեր ունեցող մի շարք տվյալներ և դրանց վրա հիմնված բուժական մարտավարական քայլեր:

### Հետևություններ

Ապացուցողական մոտեցումների վրա հիմնված բուժման մեթոդի ընտրությունը կաթնատամների և չձևավորված արմատներով մշտական ատամների պուլպիտների տարբեր ձևերի ժամանակ կնպաստի բուժման ելքերի բարելավմանը:

### **Բանալի բառեր**

**Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման համակարգ, պուլպիտ, կակղանի կենսունակություն, մեկուսիչ տակդիր, կալցիումի հիդրօքսիդ, MTA, պուլպոտոմիա, պուլպեկտոմիա, ապեքսոգենեզ, ապեքսիֆիկացիա:**

### **Պատասխանատու համակարգող**

Տեր-Պողոսյան ՀՊ ՅուՊ բժշկ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի վարիչ, Համալսարանական թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկայի ղեկավար

### **Աշխատանքային խմբի անդամներ**

- Վարդանյան Ի.Ֆ., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դոցենտ
- Բաղեյան Է. Հ., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դոցենտ
- Բաղայան ԱԺՊ «Հովարդ Կարագյոզյան» Բ.Բ.Հ.Կ.տնօրենի տեղակալ բուժօգնով

- Գևորգյան Մ.Ա., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դասախոս
- Բալաջյան Ս.Գ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի կլինիկական օրդինատոր

### **Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ**

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են շահերի բախման բացակայության վերաբերյալ: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կազմակերպությունը չի ունեցել որևէ ազդեցություն փաստաթղթի պարունակության կամ ձևավորման վրա:

### **Շնորհակալական խոսք**

Պատասխանատու համակարգողն իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր այնդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար, բ.գ.թ. Հարություն Մանգոյանին, ինչպես նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և

օրթոդոնտիայի ամբիոնի դասախոս Ռուզաննա Ստեփանյանին և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի կլինիկական օրդինատոր Նարինե Միրզոյանին:

**Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին  
անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի  
պայմաններում**

**Բովանդակություն**

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Պուլպիտների կլինիկական ախտորոշումը և բուժման մեթոդի ընտրությունը

Նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտով ատամների կակղանի վիտալ բուժում

Անդարձելի պուլպիտով կամ կակղանի մեռուկացումով կաթնատամների բուժման եղանակները

Նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտով չձևավորված արմատներով մշտական ատամների վիտալ բուժում

Պուլպիտների բուժման այլ եղանակներ

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

**Հապավումներ**

AAE (American Association of Endodontists)՝ Ամերիկյան էնդոդոնտիստների ասոցիացիա  
AAPD (American Academy of Pediatric Dentistry)՝ Ամերիկյան մանկական ստոմատոլոգիայի ակադեմիա  
MTA Mineral trioxide aggregate  
ԷՕԴ Էլեկտրոդոնտոդիագնոստիկա

## **Նախաբան**

Պուլպիտների բուժման առաջնային նպատակը ատամների և շուրջատամնային հյուսվածքների ամբողջականության պահպանումն է, ինչը ենթադրում է կակղանի կենսունակության պահպանում կարիեսի, վնասվածքի կամ այլ պատճառների ազդեցությունից: Չձևավորված արմատներով մշտական ատամներում կակղանի կենսունակության պահպանումն անհրաժեշտ է ապեքսոգենեզի ավարտման համար: Անհրաժեշտ է պսակի հետ օպտիմալ փոխհարաբերություն ունեցող և բավականաչափ հաստ դենտինային շերտով պատված արմատի առկայություն, որպեսզի ատամը կարողանա դիմակայել նորմալ ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությանը: Ուստի կակղանի պահպանումը նոր ծկթած մշտական ատամների բուժման հիմնական նպատակներից է: Այնուամենայնիվ, առանց կենսունակ կակղանի ատամները ևս կլինիկորեն կարող են պահպանել իրենց ֆունկցիաները [1]:

## **Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն**

Այս ուղեցույցը մշակվել է Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի աշխատակիցների կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում

MEDLINE, Pubmed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2006 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Փաստաթղթի սկզբնաղբյուրն է հանդիսացել Ամերիկյան մանկական ստոմատոլոգիայի ակադեմիայի (American Academy of Pediatric Dentistry, AAPD) 2006թ. լույս տեսած և 2014թ. թարմացված “Guideline on Pulp Therapy for Primary and Immature Permanent Teeth” կլինիկական ուղեցույցը: Այս փաստաթղթի խորհուրդները հիմնված են գրականության համակարգային վերլուծությունների և փորձագետների կարծիքների վրա: Ուղեցույցի տեղայնցաման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի ընդլայնված նիստի ընթացքում (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է մանկական և մեծահասակների ստոմատոլոգների, մանկաբույժների և առողջապահության կազմակերպիչների համար:

### **Պուլպիտների կլինիկական ախտորոշումը և բուժման մեթոդի ընտրությունը**

Պուլպիտների բուժման ցուցումները, խնդիրները և մեթոդները կախված են կակղանի կենսունակությունից, հիմնվում են կակղանի նորմալ վիճակի (ախտանիշների բացակայություն և նորմալ զգայունություն կենսունակության թեստավորման հանդեպ),

դարձելի պուլպիտներ (կակղանը վերականգնման ենթակա է), սիմպտոմատիկ կամ անսիմպտոմ անդարձելի (կենդանի ինֆեկցված կակղանը վերականգնման ենթակա չէ) պուլպիտների, նեկրոտիկ պուլպիտների կլինիկական ախտորոշման վրա [2]: Կլինիկական ախտորոշումը [3] ներառում է՝

1. Համապարփակ հիվանդության պատմություն:
2. Նախկին և ներկայիս ստոմատոլոգիական ստատուսի, ստոմատոլոգիական հիվանդությունների և ստացած բուժման վերլուծություն, ներառյալ ընթացիկ ախտանիշները և հիմնական գանգատները:
3. Ընթացիկ ախտանիշների և հիմնական գանգատների սուբյեկտիվ գնահատում երեխայի կամ ծնողների կողմից՝ հարցման միջոցով՝ ցավի տեղակայումը, ուժգնությունը, տևողությունը, կապ գրգռիչների հետ, թեթևացումը, սպոնտանությունը:
4. Ներբերանային փափուկ և կարծր հյուսվածքների և արտաբերանային օբյեկտիվ զննում:
5. Կակղանի բորբոքման, ատամի ֆուրկացիոն և հարարմատային շրջանների և ոսկրային հյուսվածքի նեկրոտիկ քայքայման հայտնաբերման նպատակով ռենտգեն-ախտորոշում:
6. Կլինիկական թեստեր՝ թակում, շարժունության որոշում [1,4]:

Մշտական ատամներում կակղանի վիճակի ստուգման ջերմային և էլեկտրական (ԷՕԴ) թեստերը կարող են լինել ինֆորմատիվ [3]:

Պուլպիտների բուժումը պահանջում է բուժված ատամների և շրջակա հյուսվածքների վիճակի պարբերական կլինիկական և ռադիոգրաֆիկ գնահատում: Բուժման ավարտից հետո կլինիկական հսկողությունը պետք է իրականացվի վեց ամիսը մեկ և կազմի պացիենտի բերանի խոռոչի պարբերական զննումների մի մասը: Սուր օդոնտոգեն

ինՖեկցիա ունեցող պացիենտները բուժումից հետո կարող են ունենալ ավելի հաճախակի կլինիկական զննումների անհրաժեշտություն: Կաթնատամների պուլպեկտոմիայի դեպքում ռենտգեն-հսկողությունը պետք է անմիջապես հաջորդի պրոցեդուրային, որպեսզի արձանագրվի լեցավորման որակը և օգնի ատամի կանխատեսման որոշման հարցում: Այս ռենտգեն-պատկերը հետագայում պետք է համեմատության հիմք հանդիսանա հերթական ռենտգեն-պատկերների համար (վերջիններիս տեսակը և հաճախականությունը որոշում է բժիշկը): Պարբերական համապարփակ զննումների ժամանակ ստացված պանորամիկ պատկերները բավարար են: Եթե պանորամիկ ռենտգեն-պատկերը ցույց չի տալիս միջարմատային տարածությունները, ապա նշանակակետային պատկերն ավելի ինֆորմատիվ է:

Այնպիսի ախտանիշներն, ինչպիսիք են ինքնաձին ատամնացավը, խուղակի առկայությունը, փափուկ հյուսվածքների բորբոքումը՝ ոչ որպես լնդաբորբի կամ պերիօդոնտիտի հետևանք, արտահայտված շարժունությունը, որը կապված չէ վնասվածքի հետ, ռենտգենաբանորեն ֆուրկացիոն կամ հարգագաթային շրջանում նոսրացման առկայությունը, ներքին կամ արտաքին ռեզորբցիայի ռադիոգրաֆիկ ապացույցները, անդարձելի պուլպիտի կամ նեկրոզի կլինիկական նշաններն են:

Այն դեպքում, երբ կարճատև ցավը վերանում է ցավազրկող դեղամիջոցների օգտագործումից, ատամները խոզանակելուց, գրգռիչը վերացնելուց հետո, կամ բացակայում են անդարձելի պուլպիտներին բնորոշ նշանները, ախտորոշվում է դարձելի պուլպիտ:

### **Բուժական/ախտորոշիչ խորհուրդներ**

**1**  **Ախտորոշման, բուժման և բուժման ելքի հետ կապված ողջ ինֆորմացիան խորհուրդ է տրվում արձանագրել պացիենտի քարտի մեջ:**

**2**  **Յուրաքանչյուր վերջնականապես պլանավորված բուժում պետք է ներառի՝**



1. Պացիենտի հիվանդության պատմության,
2. Երեխայի ընդհանուր զարգացման մեջ յուրաքանչյուր ատամի դերի,
3. Պուլպիտների բուժման այլընտրանքների,
4. Ատամի վերականգնման հնարավորության վերլուծություն:

3☒ Անդարձելի պուլպիտի կամ կակղանի մեռուկացման ախտորոշման դեպքում խորհուրդ է տրվում բուժման դեվիտալ մեթոդների կիրառում [5,6]:

4☒ Դարձելի պուլպիտների ախտորոշման դեպքում խորհուրդ է տրվում կիրառել բուժման վիտալ մեթոդներ: Նորմալ, կենսունակ կակղան ունեցող ատամներին անհրաժեշտ է կենսաբանական բուժում, իսկ դարձելի պուլպիտի ախտորոշման դեպքում՝ վիտալ պրոցեդուրաներ [7-10]:

5☒ Այն դեպքերում, երբ անհնար է սահմանափակել ինֆեկցիոն պրոցեսը՝ կիրառելով բուժման միջոցներ տվյալ հատվածում, երբ անհնար է վերականգնել ոսկրային հենքը, ատամի պահպանված հյուսվածքներն անբավարար են վերականգնման համար, երբ առկա է արմատների արտահայտված ախտաբանական ներժծում, խորհուրդ է տրվում կատարել ատամի հեռացում [1,5,6]:

6☒ Պուլպիտների բուժման բոլոր մեթոդները ցուցված է անցկացնել արդյունավետ մեկուսացման պայմաններում (rubber-dam կամ այլ միջոց), որպեսզի բուժման ընթացքում նվազեցվի բակտերիալ կոնտամինացիայի հավանականությունը:

7☒ Կաթնատամների պուլպոտոմիայի ռադիոգրաֆիկ գնահատում պետք է կատարվի առավելագույնը տարին մեկ անգամ, քանի որ պուլպոտոմիայի բարենպաստ ցուցանիշները ժամանակի ընթացքում նվազում են [11]:

8☒ **Չձևավորված արմատներով մշտական ատամների պուլպիտների բուժումից հետո ռադիոգրաֆիկ հսկողություն անհրաժեշտ է 6, ապա 12 ամիս անց, հետագայում՝ բժշկի հայեցողությամբ:**

9☒ **Ապեքսիֆիկացիայի, ռեիմպլանտացիայի և պատրաստի գամիկների կիրառումը կաթնատամներում հակացուցված է [12]:**

**Նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտով կաթնատամների կակղանի վիտալ բուժում**

**Պաշտպանիչ (մեկուսիչ) տակդիր.** Պաշտպանիչ տակդիրը դա բարակ շերտով հատուկ նյութի տեղադրումն է պուլպար խոռոչի մակերեսին՝ խորը խոռոչի մշակումից հետո, այն ծածկում է դենտինային խողովակները, ստեղծելով պաշտպանիչ պատնեշ ռեստավրացիոն նյութի կամ ցեմենտի և կակղանի միջև: Ըստ բժշկի հայեցողության՝ որպես պաշտպանիչ տակդիր կարելի է օգտագործել կալցիումի հիդրօքսիդ պարունակող նյութեր, դենտինի համար նախատեսված բոնդինգ համակարգ կամ ապակեփոնոմերային ցեմենտ: [13,14]:

### **Խորհուրդներ**

- **Նորմալ կակղանով ատամներում, երբ կարիեսով ախտահարված հյուսվածքներն ամբողջովին հեռացված են, պաշտպանիչ տակդիրը կարող է տեղադրվել խորը մշակված հատվածներում՝ կակղանի վնասման հավանականությունը և հետօպերացիոն զգայունությունը նվազեցնելու, կակղանի վրա բուժիչ ազդեցություն թողնելու նպատակով [15,16]:**
- **Պաշտպանիչ տակդիրի տեղադրումը խորը մշակման հատվածներում կիրառվում է կակղանի կենսունակությունը պահպանելու, կակղանի վրա բուժիչ ազդեցություն թողնելու, երրորդային դենտինի առաջացումը խթանելու և բակտերիալ միկրոհոսքերը նվազեցնելու նպատակով [17,18]:**

**Բուժումից հետո չպետք է հանդիպեն այնպիսի անբարենպաստ կլինիկական նշաններ, ինչպիսիք են զգայունությունը, ցավը և այտուցը:**

**Պուլպիտների անուղղակի բուժում**

Կակղանի անուղղակի բուժումը իրականացվում է կակղանին մոտ գտնվող խորը կարիոզ ախտահարում ունեցող ատամներում, երբ բացակայում են կակղանի դեգեներացիայի նշանները [1]: Կակղանին մոտ կարիոզ փոփոխված հյուսվածքները չեն հեռացվում, որպեսզի կակղանը չվնասվի, և տեղադրվում է կենսահամատեղելի նյութ[19]:Ռենտգեն-կոնտրաստ այնպիսի տակդիրներ, ինչպիսիք են դենտինի բոնդինգի ագենտը [20],կոմպոմերները [21,22], ապակեփոնոմերային ցեմենտը [7,9,25-27], կալցիումի հիդրօքսիդը [23,24], ցինկ-օքսիդ-էվգենոլային մածուկը [24] տեղադրվում են պահպանված կարիոզ դենտինի վրա՝ բուժման և վերականգնման նպատակով: Եթե կիրառվել է կալցիումի հիդրօքսիդ, ապա այն պետք է ծածկվի ապակեփոնոմերային ցեմենտով կամ ցինկ-օքսիդ-էվգենոլային մածուկով՝ հերմետիզացում ապահովելու նպատակով: Կալցիումի հիդրօքսիդն օժտված է բարձր լուծելիությամբ, հերմետիկության ապահովման ցածր ունակությամբ և ցածր կոմպրեսիոն ուժով [28-31]:Ապակեփոնոմերային ցեմենտի ևցինկ-օքսիդ-էվգենոլային մածուկի կիրառումն ունի ևս մեկ լրացուցիչ առավելություն՝ ապահովում է կարիեսածին մանրէների ակտիվության ընկճում [32,33]:Այնուհետև ատամը վերականգնվում է այնպիսի նյութով, որը հերմետիզացնում է ատամը միկրոհոսքերից: Ժամանակավոր բուժիչ վերականգնումն ապակեփոնոմերային ցեմենտով կարելի է կիրառել կարիեսի վերահսկման նպատակով այն ատամներում, որտեղ կարիոզ պրոցեսն ընթանում է դարձելի պուլպիտի նշաններով [34,35]:Քանի դեռ ատամը հերմետիզացված է բակտերիալ կոնտամինացիայից, կարիեսի կանգնեցման և կակղանի մեկուսացման նպատակով վերականգնողական դենտինի առաջացման առումով կանխատեսումները բարենպաստ են [7,9,20,22-27,35]:Երկար տարիների փորձը ցույց է տալիս, որ

կակղանի անուղղակի ծածկումն ունի ավելի բարեհաջող ելքեր, քան պուլպոտոմիան: Ուստի կակղանի անուղղակի բուժումն ավելի նախընտրելի տարբերակ է, քան պուլպոտոմիան, երբ խոսքը գնում է նորմալ կակղանի կամ դարձելի պուլպիտների մասին:

### **Խորհուրդներ**

- **Կակղանի անուղղակի ծածկումը ցուցված է կաթնատամներում, երբ կակղանն ախտահարված չէ [18] կամ առկա է պուլպիտի դարձելի ձև, երբ խորանիստ կարիոզ դենտինը չի հեռացվում, որպեսզի կակղանը չվնասվի [8]: Կակղանի վիճակը գնահատվում է կլինիկական և ռադիոգրաֆիկ չափանիշներով [8,9]:**
- **Ռեստավրացիոն նյութը պետք է լիարժեք հերմետիզացնի դենտինը բերանի խոռոչի միջավայրից: Պետք է պահպանվի ատամի կենսունակությունը: Պետք է բացակայեն այնպիսի հետբուժական ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, զգայունությունը և այտուցը: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական արտաքին կամ ներքին ռեզորբցիայի կամ այլ ախտաբանական փոփոխությունների ռադիոգրաֆիկ ապացույցները: Չպետք է որևէ վնաս հասցվի մշտական ատամներին:**

### **Կակղանի ուղղակի ծածկում**

Եթե կակղանը ենթարկվում է վնասման կամ գջիրի մեխանիկական ազդեցությանը կարիոզ խոռոչի մշակման ժամանակ, կակղանի վնասված հատվածի վրա պետք է տեղադրել կենսահամատեղելի, ռենտգեն-կոնտրաստ նյութ՝ MTA [41-44] կամ կալցիումի հիդրօքսիդ [45]: Ատամը պետք է վերականգնել միկրոհոսքերից հերմետիզացնող նյութով [7]:

### **Խորհուրդներ**

- Միջամտությունը ցուցված է կաթնատամներում, որոնց կակղանը նորմալ է, սակայն ենթարկվել է փոքր մեխանիկական կամ տրավմատիկ ազդեցության, երբ բարենպաստ ելքի համար պայմաններն օպտիմալ են [41-45]: Ուղղակի ծածկում խորհուրդ չի տրվում կատարել կաթնատամներում, որոնց կակղանը ախտահարվել է կարիոզ պրոցեսի արդյունքում [1]:
- Պետք է պահպանվի ատամի կենսունակությունը: Պետք է բացակայեն այնպիսի հետբուժական ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, զգայունությունը և այտուցը: Պետք է տեղի ունենա կակղանի առողջացում ու ռեպարատիվ դենտինի գոյացում: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական արտաքին կամ ներքին ռեզորբցիայի կամ այլ ախտաբանական փոփոխությունների ռադիոգրաֆիկ ապացույցները: Չպետք է որևէ վնաս հասցվի մշտական ատամներին:

### **Պուլպոտոմիա**

Պուլպոտոմիա կատարվում է խորանիստ կարիեսով կաթնատամներում, որոնցում, սակայն, բացակայում են արմատային պաթոլոգիայի նշանները, և կարիոզ փոփոխված հյուսվածքների մեխանիկական մշակման ընթացքում տեղի է ունենում կակղանի մերկացում: Պսակային կակղանը հեռացվում է, իսկ պահպանված արմատային կակղանի մակերեսին տեղադրվում է երկարատև ազդեցության կլինիկորեն արդյունավետ դեղամիջոցներ՝ ֆորմոկրեզոլ, երկաթի սուլֆիտ և այլն [46-52]: Որոշ հետազոտությունների ընթացքում նատրիումի հիպոքլորիտի կիրառման արդյունքները համեմատելի են ֆորմոկրեզոլի և երկաթի սուլֆատի ցուցաբերած ազդեցության հետ [53-55]: Կացիումի հիդրօքսիդ ևս կիրառվում է, սակայն այն արդյունավետ է ավելի կարճ ժամանակ [56]: MTA-ն ավելի նոր նյութ է պուլպոտոմիայի համար՝ ավելի բարենպաստ կանխատեսումով: Կլինիկական փորձարկումները ցույց են տալիս, որ MTA-ի արդյունավետությունը ավելին է, քան ֆորմոկրեզոլի և երկաթի սուլֆիտի

արդյունավետությունը [8,11,57-61], և այն կարելի է համարել պուլպոտոմիայի նախընտրելի միջոց [62,63]: Ատամի խոռոչի պսակային հատվածը ցինկ-օքսիդ-էվգենոլային մածուկով կամ այլ համապատասխան նյութով պլոմբավորելուց հետո ատամը վերականգնվում է միկրոհոսքերից հերմետիզացնող նյութով: Առավել արդյունավետ և երկարաժամկետ են ծառայում չժանգոտող պողպատե պսակները: Բավականաչափ էմալային հյուսվածքի պահպանման դեպքում և երբ կաթնատամի փոփոխմանը մնացել է երկու տարուց ավելի քիչ ժամանակ, որպես այլընտրանք են ծառայում ամալգաման և կոմպոզիտային խեժերը [65-67]:

### **Խորհուրդներ**

- Պուլպոտոմիան ցուցված է այն դեպքերում, երբ կաթնատամներում կարիեսով ախտահարված հյուսվածքների արդյունքում վնասվում է նորմալ կակղանը, կամ առկա է դարձելի պուլպիտ, կամ կակղանի վնասվածքային մերկացում [6]: Պսակային կակղանը հեռացվում է, որոշվում է պահպանված արմատային կակղանի վիճակը՝ թարախային բորբոքում, մեռուկացում կամ արտահայտված արյունահոսություն, որը չի դադարեցվում բամբակե խժուժով մի քանի րոպեների ընթացքում, և ռենտգենաբանորեն բացակայում են ինֆեկցման կամ ախտաբանական ներժժման նշանները:
- Արմատային կակղանը պետք է պահպանվի առանց այնպիսի ախտանիշների, ինչպիսիք են ցավը, զգայունությունը, այտուցը: Ռենտգենաբանորեն պետք է բացակայեն արմատի ախտաբանական արտաքին ներժժման նշանները: Արմատի ներքին ներժժումը պետք է ինքնուրույն կանգառնի և կայուն լինի: Բժիշկը պետք է հետևի ներքին ներժժմանը, պետք է հեռացնի ախտահարված ատամը, եթե թափածակումը պատճառ է դառնում հենարանային ոսկրային հյուսվածքի կորստի և ինֆեկցման, և բորբոքման նշանների [52,68-70]: Չպետք է որևէ վնաս հասցվի մշտական ատամներին:

## **Անդարձելի պուլպիտով կամ կակղանի մեռուկացումով կաթնատամների բուժման եղանակները**

### **Պուլպէկտոմիա**

Պուլպէկտոմիան էնդոդոնտիկ միջամտություն է կարիեսի կամ վնասվածքի հետևանքով անդարձելի ինֆեկցված կամ մեռուկացված կակղանի համար: Արմատախողովակը մշակվում և ձևավորվում է մանուալ կամ ռոտացիոն գործիքներով [21]: Քանի որ գործիքային մշակումը և իներտ լուծույթներով իրիգացիաներն ունակ չեն ամբողջությամբ վերացնել բակտերիալ պոպուլյացիաներն արմատախողովակների համակարգից, ուստի նատրիումի հիպոքլորիտի և/կամ քլորհեքսիդինի լուծույթներով իրիգացիաները կարևոր քայլ են համարվում արմատախողովակների ադեկվատ բակտերիալ դեկոնտամինացիայի հարցում [70-72]: Քանի որ նատրիումի հիպոքլորիտը հզոր հյուսվածքային գրգռիչ է, այն չպետք է դուրս բերվի արմատախողովակի գագաթից [73]: Արմատախողովակների չորացումից հետո ներծծվող մածուկով՝ ցինկ-օքսիդ-էվգենոլ [5,74], յոդոֆորմային հիմքով [75], յոդոֆորմ և կալցիումի հիդրօքսիդ [76-78] պարունակող, կատարվում է արմատախողովակների լեցավորում: Այնուհետև ատամը վերականգնվում է միկրոհոսքերից մեկուսացնող նյութով:

### **Խորհուրդներ**

- **Պուլպէկտոմիան ցուցված է կաթնատամների անդարձելի պուլպիտների, կամ կակղանի մեռուկացման, կամ անբարեհաջող պուլպոտոմիայի (օրինակ՝ արտահայտված արյունահոսություն, որը չի դադարեցվում բամբակե խժուժի օգնությամբ մի քանի րոպեների ընթացքում) դեպքում: Արմատները պետք է ներծծված լինեն նվազագույն կամ ընդհանրապես ներծծված չլինեն:**
- **Վերջնական բուժումը, ինֆեկցիոն պրոցեսի ռադիոգրաֆիկ փոփոխությունը տեղի է ունենում վեց ամիսների ընթացքում, իսկ կլինիկական նշաններն անհետանում են մի քանի շաբաթների ընթացքում: Ռադիոգրաֆիկ պատկերում պետք է տեսնենք բարեհաջող լեցավորում՝ առանց գեր- կամ**

**թերլեցավորման [74,76,78]: Բուժման արդյունքում պետք է հնարավոր լինի կաթնատամի արմատների և լեցանյութի ներծծումը, որպեսզի ապահովվի մշտական ատամների նորմալ ծկթումը: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական ներծծումը և ֆուրկացիոն կամ հարգագաթային շրջաններում նոսրացման օջախները:**

**Նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտով չձևավորված արմատներով մշտական ատամների վիտալ բուժում**

**Պաշտպանիչ (մեկուսիչ) տակդիր.** Պաշտպանիչ տակդիրը դա բարակ շերտով հատուկ նյութի տեղադրումն է պուլպար խոռոչի մակերեսին՝ խորը խոռոչի մշակումից հետո, այն ծածկում է դենտինային խողովակները, ստեղծելով պաշտպանիչ պատնեշ ռեստավրացիոն նյութի կամ ցեմենտի և կակղանի միջև: Ըստ բժշկի հայեցողության՝ որպես պաշտպանիչ տակդիր կարելի է օգտագործել կալցիումի հիդրօքսիդ պարունակող նյութեր, դենտինի համար նախատեսված բոնդինգ համակարգ կամ ապակեփոնոմերային ցեմենտ: [13,14]: Ապա կատարվում է ատամի վերականգնում, որը կնվազեցնի մանրէների ներթափանցումը դենտինի և ռեստավրացիայի միջև ընկած տարածություն [17,18]:

### **Խորհուրդներ**

- **Նորմալ կակղանով ատամներում, երբ կարիեսով ախտահարված հյուսվածքներն ամբողջովին հեռացված են, պաշտպանիչ տակդիրը կարող է տեղադրվել խորը մշակված հատվածներում՝ կակղանի վնասման հավանականությունը և հետօպերացիոն զգայունությունը նվազեցնելու, կակղանի վրա բուժիչ ազդեցություն թողնելու նպատակով:**
- **Խորը մշակման հատվածներում պաշտպանիչ տակդիրի տեղադրումը կիրառվում է կակղանի կենսունակությունը պահպանելու, կակղանի վրա**



**բուժիչ ազդեցություն թողնելու, երրորդային դենտինի առաջացումը խթանելու և բակտերիալ միկրոհոսքերը նվազեցնելու նպատակով [17,18]:**

### **Ապեքսոզենեզ (արմատի ձևավորում).**

Ապեքսոզենեզը հյուսվածաբանական տեսանկյունից արմատների գագաթների ֆիզիոլոգիական զարգացումն ու ձևավորումն է: Կենսունակ մշտական ատամներում արմատի գագաթի ձևավորումը կարող է ավարտվել վիտալ պուլպոթերապիայի համապատասխան մեթոդի կիրառման դեպքում՝ կակղանի անուղղակի բուժում, կակղանի ուղղակի ծածկում, մասնակի պուլպոտոմիա կարիոզ և վնասվածքային ախտահարման դեպքում:

Մեր փորձը ցույց է տալիս, որ չձևավորված արմատներով մշտական ատամներում պուլպիտների բուժման համապատասխան մեթոդիկայի պատշաճ կիրառումը մեծ մասամբ բերում է արմատների լիարժեք ձևավորման, ինչն ապահովում է ատամի ֆունկցիաների երկարաժամկետ պահպանումը:

### **Կակղանի անուղղակի բուժում**

Կակղանի անուղղակի բուժումն իրականացվում է դարձելի պուլպիտով և խորանիստ կարիեսով ատամներում [6]: Վերջին տարիներին բուժումը կատարվում էր երկու այցով՝ կարիոզ դենտինը հեռացնելուց հետո կատարվում էր կակղանին մոտ արտաքերում, պաշտպանիչ տակդիրի տեղադրում և ատամի վերականգնում՝ առանց հետագայում վերաբացման և պահպանված ախտահարված դենտինի հեռացման [79-83]: Այս մոտեցման դեպքում հնարավոր է կակղանի անսպասելի վնասում և անդարձելի պուլպիտի զարգացում [80]: Վերջերս խորանիստ կարիեսի երկու քայլով արտաքերումը վերանայվել է [72-84], այն կարող է բարեհաջող լուծել դարձելի պուլպիտների խնդիրը՝ առանց կակղան բացելու և էնդոդոնտիկ բուժում իրականացնելու [85]: Այս մոտեցումը

բաղկացած է երկու քայլերից: Առաջին քայլը կարիոզ դենտինի հեռացումն է էմալ-դենտինային սահմանի երկարությամբ և միայն չափազանց ինֆեկցված դենտինի հեռացումը՝ թողնելով կարիոզ հյուսվածքներ կակղանին մոտ հատվածներում: Նպատակը կարիեսաձին միջավայրի փոփոխումն է, մանրէների քանակի նվազեցումը, չհեռացված կարիոզ հյուսվածքների մեկուսացումը բերանի խոռոչի կենսաթաղանթից և կարիեսի զարգացման դանդաղեցումը կամ սահմանափակումը [85-87]: Երկրորդ քայլը պահպանված կարիոզ հյուսվածքների հեռացումն է և վերջնական ռեստավրացիան: Սովորաբար երկու քայլերի միջև ցանկալի է թողնել 3-6 ամիս տևողությամբ ինտերվալ՝ թողնելով բավականաչափ ժամանակ երրորդային դենտինի ձևավորման և պուլպիտի տարբերակիչ ախտորոշման համար: Այս մոտեցման դեպքում որոշիչ է համարվում գերազանց հերմետիկ վարականգնումը [17-18]:

### **Խորհուրդներ**

- **Կակղանի անուղղակի բուժումը ցուցված է մշտական ատամների կակղանի նորմալ վիճակի ախտորոշման դեպքում, երբ բացակայում են պուլպիտի նշանները, կամ դարձելի պուլպիտի դեպքում: Կակղանը ենթարկվում է կլինիկական և ռադիոգրաֆիկ քննության:**
- **Միջանկյալ և/կամ վերջնական ռեստավրացիան պետք է լիարժեք մեկուսացնի դենտինը բերանի խոռոչի միջավայրից: Ատամի կենսունակությունը պետք է պահպանվի: Պետք է բացակայեն այնպիսի հետբուժական ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, զգայունությունը և այտուցը: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական արտաքին կամ ներքին ռեզորբցիայի կամ այլ ախտաբանական փոփոխությունների ռադիոգրաֆիկ ապացույցները: Չձևավորված արմատներով ատամներում պետք է շարունակվի արմատի զարգացումը և գազաթի ձևավորումը:**

### **Կակղանի ուղղակի ծածկում**

Երբ կարիոզ խոռոչի մշակման ժամանակ տեղի է ունենում կակղանի փոքրիկ վնասում, որից հետո հաջողվում է կանգնեցնել արյունահոսությունը, վնասված կակղանը ծածկվում է կալցիումի հիդրօքսիդով [88-92] կամ MTA-ով [92], ապա միկրոհոսքերից հերմետիզացնող նյութով կատարվում է ռեստավրացիա:

### **Խորհուրդներ**

- **Կակղանի ուղղակի ծածկումը ցուցված է մշտական ատամներում նորմալ կակղանի փոքրիկ կարիոզ կամ վնասվածքային մերկացման դեպքում:**
- **Ատամի կենսունակությունը պետք է պահպանվի: Պետք է բացակայեն այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, զգայունությունը և այտուցը: Պետք է տեղի ունենա կակղանի բուժում և ռեպարատիվ դենտինի գոյացում: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական արտաքին կամ ներքին ռեզորբցիայի կամ այլ ախտաբանական փոփոխությունների ռադիոգրաֆիկ ապացույցները: Չձևավորված արմատներով ատամներում պետք է շարունակվի արմատի զարգացումը և գազաթի ձևավորումը:**

### **Մասնակի պուլպոտոմիա կարիոզ ախտահարման դեպքում**

Այս դեպքում կատարվում է մերկացած կակղանից ներքև գտնվող հյուսվածքի հեռացում 1-3 մմ դեպի առողջ հյուսվածքներ: Արյունահոսությունը պետք է կանգնեցվի մանրէասպան ագենտներով, իրիգացիաների միջոցով՝ նատրիումի հիպոքլորիտ կամ քլորհեքսիդին [70-72], ապա տեղադրվի կալցիումի հիդրօքսիդ [6,93,94] կամ MTA [95-97]: MTA-ն պետք է ծածկի մերկացումը և շրջակա դենտինը, ապա տեղադրվում է լուսակարծրացող կոմպոմեր և վերջում՝ միկրոհոսքերից պաշտպանող ռեստավրացիա [98]:

### **Խորհուրդներ**

- Մասնակի պուլպոտոմիան ցուցված է չձևավորված մշտական արմատներով ատամներում կակղանի կարիոզ ախտահարման դեպքում, երբ հաջողվում է արյունահոսությունը դադարեցնել մի քանի թուփերի ընթացքում: Ատամը պետք է լինի կենսունակ, նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտ ախտորոշմամբ [6]:
- Չհեռացված կակղանը պետք է պահպանի կենսունակությունը պուլպոտոմիայից հետո: Պետք է բացակայեն այնպիսի հետբուժական ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, զգայունությունը և այտուցը: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական արտաքին կամ ներքին ռեզորբցիայի կամ այլ ախտաբանական փոփոխությունների ռադիոգրաֆիկ ապացույցները: Չձևավորված արմատներով ատամներում պետք է շարունակվի արմատի զարգացումը և գազաթի ձևավորումը:

### **Մասնակի պուլպոտոմիա կակղանի վնասվածքային մերկացման դեպքում.**

Այս դեպքում կատարվում է մերկացած կակղանից ներքև գտնվող հյուսվածքի հեռացում 1-3 մմ կամ ավելի խորը դեպի առողջ հյուսվածքներ: Արյունահոսությունը պետք է կանգնեցվի մանրէասպան ազեոններով իրիգացիաների միջոցով՝ նատրիումի հիպոքլորիտ կամ քլորհեքսիդին [71,72], ապա տեղադրվի կալցիումի հիդրօքսիդ [99-102] կամ MTA [6,103]: Ֆրոնտալ ատամներում ավելի շատ ցուցված է սպիտակ, այլ ոչ թե մոխրագույն MTA-ի կիրառումը, որպեսզի նվազի գունափոխության հավանականությունը: Երկու տարբերակներն էլ օժտված են նույն հատկություններով [104,105]: MTA-ն պետք է ծածկի մերկացումը և շրջակա դենտինը, ապա տեղադրվում է լուսակարծրացող կոմպոմեր [103]և վերջում՝միկրոհոսքերից պաշտպանող ռեստավրացիա:

### **Խորհուրդներ**

- Պուլպոտոմիան ցուցված է կենսունակ, վնասվածքի արդյունքում մերկացած կակղանով, հատկապես, մեկ չձևավորված արմատով մշտական ատամներում: Կակղանի մասնահատումից հետո առաջացած արյունահոսությունը պետք է հնարավոր լինի դադարեցնել: Ոչ վնասվածքի և բուժման միջև ընկած ժամանակահատվածը, ոչ մերկացման մեծությունը նշանակություն չունեն, եթե բորբոքված մակերեսային կակղանը մասնահատվել է առողջ կակղանից [106]:
- Չհեռացված կակղանը պետք է պահպանի կենսունակությունը պուլպոտոմիայից հետո: Պետք է բացակայեն այնպիսի հետբուժական ախտանիշներ, ինչպիսիք են ցավը, զգայունությունը և այտուցը: Պետք է բացակայեն արմատների ախտաբանական արտաքին կամ ներքին ռեզորբցիայի կամ այլ ախտաբանական փոփոխությունների ռադիոգրաֆիկ ապացույցները: Չձևավորված արմատներով ատամներում պետք է շարունակվի արմատի զարգացումը և գազաթի ձևավորումը:

**Պուլպիտների բուժման այլ եղանակները.**

**Պուլպէկտոմիա (արմատախողովակների բուժում).**

Ձևավորված արմատներով մշտական ատամների պուլպէկտոմիան սովորական էնդոդոնտիկ բուժում է մերկացած, բորբոքված և/կամ մեռուկացված կակղանով ատամներում, որի նպատակն է կակղանային կամ շուրջարմատային ինֆեկցիայի վերացումը: Բոլոր դեպքերում կատարվում է պսակային կակղանի հեռացում, ապա արմատախողովակների համակարգի մշակում, մանրէազերծում, ձևավորում և լեցավորում կենսահամատեղելի, չներծծվող լեցանյութով [14]:

**Խորհուրդներ**

- **Ցուցված է վերականգնման ենթակա, անդարձելի պուլպիտով կամ նեկրոտիկ պուլպիտով, ձևավորված արմատներով մշտական ատամներում:** Էնդոդոնտիկ բուժման ենթարկված, սակայն հարգազաթային շրջանում պահպանված նոսրացման օջախով ատամներում, արմատախողովակներում կալցիֆիկատներ պարունակող ատամներում ցուցված է ավելի մասնագիտացված բնույթի էնդոդոնտիկ բուժում:
